

շկորչի, չպակասի, որ հոգս է քաշում աշխարհիս ամենաշնչին որդի համար ևս որ իւր կեանքին վերայ ուրախ ապրումէ վարդի մի թերթի վերայ մեղրի ցողի նման — նա, այն Ստեղծող Աստուածը պէտք է տիեզերքի մեծ թագաւորութիւնը այնպիսի անվերջ, յաւիտենական իմաստութեամբ կառավարէր ու պիտի կարողանար մոռանալ իւր զաւակները, որոնք ամէն բանից աւելի նւրան են գովում, նւր անունը տալիս, նւրան երկրպագութիւն անում: — Առանձին՝ Կ'նչ անարժան բառ է, որ մարդ կարող է մոքից անցկացնել, կամ բերանից հանել ամենակատար էակի մասին: Կամ Աստուած չէ նա, կամ որ Աստուած է, ուրեմն և ամենակատարեալ է. և եթէ նա ամենակատարեալ է, ուրեմն և անվերջ, անսահման ու յաւիտենական է նորա ամենագիտութիւնը, ամենողորմածութիւնը և ամենայն ինչ ընդգրկող սէրն:

Ով անքննեի եռւթիւն, որին հայր անուն եմ տալիս. Պու որ ամենայն բան պահպանումես, ամենայն բան կարգաւորումես, ամենայն բան տնօրինում, կառավարում, առաջնորդում: Պու ես տնօրինողն և իմ վիճակս, ինձ ամենայն լինելու բաներն: — Ոչ մի ժամանակ ինձ թողած չես, ոչ մի ժամանակ ևս ինձ թողնելու չես, երեսից ձգելով թէե ամենայն բան ևս ինձ թողնելու լինի: Սորա համար հանդիսատ ու անվրդով սրտով կամենումեմ ևս այն ճանապարհներով գնալ, որ ինձ պիտի տանի Քո աներեղյթ ձեռգ. վասն զի այդ ճանապարհները պիտի բերեն, հասցնեն ինձ դէպ ի Քեզ: Երկրպագութեամբ եմ ընդունում Քո նախախնամութեանդ զարմանալի շաւիդները և այն յաւիտենական օրէնքները, որով պիտի շարժի հագիների աշխարհը: — Երկրպագութիւն անելով պաշտումեմ մինչև անզամ այն բանն, ինչ որ ինձ համար անհասկանալի է, և ինչ որ իմ խելքիս տկար լոյսը չէ կարող թափանցել: Վասն զի ամենայն բան, ինչ որ Քեզ զանից է գալիս, դէպ ի Քեզ է բերում:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ 2Է:

ԱՆՑՔ: («ԱՐԱՐԱՏ», յունիս)

Օրիորդը հանում է մեծ պահարանը զբքոյկի մէջից. ինզիրը համառօտ և ամիսի առաջարկում է, ամօթխածութեամբ ոգեօրվելով այս և այն բառերին վերայ, միանգամայն կենդանի և փայլուն աչքերն աւելի ուղիղ յառելով զժզոյն կառափին: Խոյս տալու կամքը բոլորովին ձնշում է, երբ մտաքերում է նա վայրկեանին կարեորութիւնը, որ նորա բաղդը պիտի վճաէ: Նա ցանկանում է նպաստ ընդունել մատենագիրների ընկերութիւնից: Աչա զրած ունի և վէալ:

— Աս թարգմանութիւն է, այս աղով պահ ու ուղղողաց և ուղղական
 — Աչ ինքնուրոշն զրուած է մատիառը ոմանելու ուղիւնք ։ զիջուածուն մասն
 — Քուք էք զրել ու որուածքը մակար մատելու ուղիւնք ։ զիջուած
 — Այս իշարկէ եաւ այս աղով պահ բարակ մատելուն ու մասն
 — Քուք ուրիշ բան ևս դրած ունիք։
 — Այս ընկերութեան ուղած այս խնդրիս մէջ այն ամենն յիշել եմ։
 Անզիական մեծ թերթը մատենագրի ձեռքն է անցնում, նա թոյլ և
 անշնորհ բռնում է այն երկայն և խոնաւուա մատերուի, որ մինչեւ եղունդ-
 ները ծածկված են ցանցով, և հարևանցի աչքից անցնում է զրուածը։
 — Այս բոլորն ուղիղ է, լւաւ է, սակայն սորանով զուք զեռ իրաւունք
 չէք ստանալ ընկերութենից նպաստ ընդունելու։
 — Ի՞նչ պատճառով ուրեմն ինչով կարելի է իրաւունք ստանալ,
 հարցնում է օրիորդը՝ տարակիւսած։
 — Որովհետեւ . . . ինչպէս ասեմ . . . նախ ձեզ յայտնի՞ է թէ այն
 ընկերութիւնն խկապէս ի՞նչ սկզբունքի վերայ հիմնված է։ Ֆրանսիայում
 այս ուրիշ տեսակ է լինում։ բայց այստեղ ձեր ուշազրութիւնը պիտի
 զարձնեմ նախ այն բանին վերայ, որ այս հիմնարկութեան սկզբունքը
 մասնաւոր ընկերական չեն, այլ, ինչպէս ասեմ, մարդաբիրական են։
 Յայտնի՞ է ձեզ որ այն ընկերութեան անդամ կարող են լինել ըստ կա-
 մաց — ոչ միայն մատենագիրները, այլ առաջ ու ով շուտ հասնի, ով
 յառաջ հանդիպի. այս միակ պայմանով որ 10 ըուբ. անդամային տուրք
 վճարէ։ Սակայն այսու ամենայնիւ ընկերութեան գումարը նշանաւոր չէ և
 ընկերութիւնն ստիպված է իւր նպաստները ու առաջին, այլ խիստ ընտ-
 րութեամբ մատեկարարել. զիտէք որ Պետերբուրգում տասնաւոր, հարիւ-
 րաւոր մատենագիրներ կան, որ վերնատներում են բնակում և գանից
 դուրս գալու անգամ հագուստ չունին։ Բայց զուք . . . զուք . . . ինչ-
 պէս նկատում եմ այսպիսի զրութենից հեռու էք։
 Աչքերի փոսերում գոնված զորշ և անգոյն կէտերը վաղուց արգէն ու-
 շաղութեամբ զննում են և մահացի շորեր հագած բարեկազմ էակինն,
 ձեռնոցներ անցուցած գեղեցիկ ձեռքերը, անզիական թերթն ու պահա-
 րանը, ասղնագործ երիզաւոր քօղու, որ վայելչապէս ծածկում է երկայն ու
 սե վարսը։
 — Իմ հագուստս է ձեզ շփոթեցնողը։ Պէտք է ասեմ որ ես որբ և ցա-
 ւած աչքերով ծնված չեմ։ (Ցաւած աչքերը սովորականից աւելի կենդա-
 նի են, ձայնը զողոցում է, և խոյս տալու ցանկութիւնը նորից մտքումն
 արձարծվում է)։ Այս հագուստը զրաւ զնել շարժէ, որովհետեւ գին չեն
 տայ և եթէ այս չլինի, ես ևս շոր չեմ ունենալ հիւանդանոցից դուրս
 գալու, ինչպէս Պետերբուրգի մատենագիրներն իւրեանց վերնատներից։
 Կարծեմ մէկը միւսին արժում են. վերնատունը և հիւանդանոցը։
 — Այդ բոլորը ճշմարիտ է, իշարկէ. բայց մի մոռանաք թէ կան մա-
 տենագիրներ, որոնք իւրեանց առողջութիւնն խկապէս մատենագրական

ասպարեզում կորցրին, ի սէր նորա չկամենալով ուրիշ գործունեութեան ձեռնարկել. ընկերութիւնը բնականաբար պարտաւոր է նոցա նախադասել. Ընկերութեանն ուրեմն հարկաւոր է գիտենալ, թէ գուք մինչև ո՞ր աստիճան կարող էք ցոյց տալ այս պարագան ձեր վերայ,

Խոյս տալու ցանկութիւնն հետզհետէ աճում է. բայց աչքերն իւրեանց զէնքը զեռ չեն ձգել և մինչև իսկ փորձ են անում հեգնել « ձեր կողմից »

— Այդ իհարկէ գժուար է ապացուցանել, մանաւանդ որ բժիշկն այս կետում գժուարանում է որոշել, թէ աչքացաւիս պատճառն ի՞նչ է. Նաև հս զրականական գործունեութեամբ պարապելու այնչափ ժամանակ ևս չունեի.

— Քանի՞ տարեկան էք Զեղ ո՞վ է բժշկում. Ի՞նչի դասեր չէք տալիս Հարցմանքը Ժեներալի համարձակութեամբ առաջարկվում են, պատասխաններն հետզհետէ աւելի վրդովեալ և երկշոտ ձայնով են տրվում և սիրտը լցված տղայի պարզմութեամբ.

— Դասեր . . . բայց գժուար է նրանց ձարելը. և մանաւանդ ես զբաղած էի. ես գրում եմ . . . վիպասանութիւն էի գրում.

— Հա՞ . . . այս վիպասանութիւն. Դուք վիպասանութիւն էք գրել:

Դէմքին բազմանշանակ ծամածութիւնը և յետոյ լութիւնը, որ ժամանակ անզիհական մէծ թերթը նօրից ցանցաձեի տակ մատերի մէջ ընկնում է օրիորդին մէջ ևս առաւել բորբաքում են խոյս տալու ցանկութիւնը.

— Դուք այստեղ թւում էք ձեր գրուածները. Բայց ընկերութիւնն ի՞նչպէս կարող է համոզվել, թէ սոցա հեղինակն յիրաւի դուք էք, թէ սոքա ուրիշի գրուածներ չեն.

— Տէր Աստուած իմ . . . հապա ի՞նչպէս անէի . . . թող ընկերութիւնը . . .

— Ես կամենում եմ, որ հասկանայիք.

Բայց նա արդէն ամեն ինչ հասկացաւ. Այժմ հասկանում է թէ ինչի իւրեան չէր կարող ընդունել — որովհետեւ մէկ որ բերանի կապերը փակեց, կակսի խօսել, խօսել, խօսել: Նա նոյնպէս անվերջ անձայր խօսում է, ինչպէս և գրում է, զարմանալի ճարապիկութեամբ թոչոտելով առարկայից առարկայ. Փարիզից Պետերբուրգ, Պետերբուրգից Փարիզ, իւր գրականական գործունեութենից ընկերական գործունեութիւն, և յետոյ կրկին իւր զրականական գործունեութիւնն, շար շար բառեր, նախադասութիւններ, պարբերութիւններ թափելով:

Նա հասկանում է, որ բոլորովին սխալ, պարզամիտ, յիմարական ընթացք էր մատենազրին մօտ գալը. Թէ նորան արդէն ճանաչած պէտք է լինէր նորա գրուածներից առանց անձամբ հետը ծանօթ լինելու. Հասկանում է որ այժմ իւրեան մնում է միայն փախչել, հեռանալ, որշափի կարելի է շուտ, և խոյս տալու ցանկութեանն այժմ տեղի տալիս են բոլոր միւս ցանկութիւնները — անվերջ երկայն ճառերը լսելու հետաքրքրութիւնը, նոյն իսկ իւր անյաջողութեան ծանր խոստովանութիւնը. Մտքումն աղօտ

կամք մի ծագում է. անզիմական մեծ թերթը ձեռքից խլել, պատառութել և յետոյ փախչել, իսկապէս փախչել:

Քայլ այնու ամենայնիւ նա բարեկրթութիւնը ձեռքից չէ թողնում:

— Ես իմ կողմից պատրաստ եմ. ես չեմ մերժում իմ կողմից. Զեր ինդիրը քարտուղարին կտամ, նա ևս իւր կողմից . . .

Օրիորդն ևս իւր կողմից շնորհակալութիւն է յայտնում, նաև ձեռք է տալիս, որ նա իւր կողմից սեղմում է իւր տաք և թաց մատերով: Անզիմական մեծ թերթը մնում է ցանցային մատերին մէջ: Գեղեցիկ իվով (պրօօրք) մարդը կրկին երկում է զրան մէջ: Տժգոյն կառափի վերջին հետախոյզ հայեացքը զննում է անզիմական վերնազեստը, բարձր կրունկներով կօշիկները և թուխ ու մեծ վարսերին վերայի փոքրիկ ժապաւենը:

Դեռ լաւ որ հեռուն, փողոցների և պատերի մէջով ևս չէ տեսնում:

Փոքրիկ սենեակում օրիորդը գլուխը զրած հիւանդանոցի սեղանին վերայ լալիս է, բոլորովին այնպէս, ինչպէս սպան լալիս էր . . .

— Նա ևս երրեմն այդպէս սիրութ լցված լալիս էր ու լալիս էր, դայեակ, ասում էր, զզուել եմ կեանքից, լաւ էր որ աչքերս կուրանային, այլ ևս բան չտեսնէի. — Իշարկէ չէք տեսնիլ, հարիկս, այնչափ լացիք որ աչքերդ ձերմակ ջուր իջաւ, ասում էի: Մի լաք, տիրուհի, մի' լաք, եթէ ոչ ձեր միւս աչքն ես կիսակվի: Բաւական է, տիրուհի, լացից ի՞նչ դուրս կդայ. բաւական է: Կամենում էք հեշտայեռ պատրաստեմ. Սպային ևս միշտ այսպիսի ժամանակներն հեշտայեռ . . .

— Պատրաստեցէք, դայեակի: —

— Խմում էր թէյ, և ասես սիրութ հովանում էր: Աչա, թէյին վերայ ևս եկաւ. պարոնը երկէ ձեզ մօտ է զալիս:

Դայեակի ձայնը կարծես առանձին նոր եղանակ մի ստանում է, անկախ նորա մելամաղձութիւնը շարժող և անհետացնող պատճառներից, այլ որպէս թէ բոլորովին յառաջացած հիւանդ և գեղեցիկ աչքերի արտասուագին և ցաւալից վիճակից:

Սենեակի գուռը լրացվում է: Ներս է մտնում երիտասարդ մի, բայց ոչ գեկով երիտասարդ, թուխ երես և գժգոյն, փոքր ինչ տարօրինակ ձևի ու հագուստով: Որ սենեակում նստելու համար շատ տաք է, իսկ ուշ աշնան համար շատ թեթեւ է:

— Տա՞նն էք: Առողջ էք:

— Այս ի՞նչպէս եղաւ:

— Այնպէս: Հետաքրքրվեցայ թէ ի՞նչ էք անում այստեղ այս բոլոր լուսների, սև ու զեղին ջրերի մէջ: Ի՞նչպէս են լուսնաւոր հիւանդները: Է՞ այդ ի՞նչ: Մի՞ գուցէ լալով դուք դարձեալ կամենումէք լուսն ստանալ:

— Այսու ահա լալիս եմ:

— Ինչի՞ կարելի՞ է իմանալ:

— Պատմե՞մ:

Պատմութիւնը վերջանում է նոր հեծեծանկով:

— Տեղն է ինձ, տեղն է ինձ, ինչի՞ համար գնացի . . .
— Այդ ճիշդ է. պէտք չէր երթալ, Ընդհանրապէս ամեն ինչ կարգին է, ինչ որ պէտք էր ապացուցանել, Խոկ թէ լալու ինչ կայ, այս ահա չեմ հասկանում:

— Ամօթ է . . .

— Ամօթը որն է, Եղանակը չէր իմացել, չէր կարողացել նորան հանդիսանալ . այլ ի՞նչ, ԱՇ, թէ որ զիտենայիք, Պէտք էր մեղ մօտ զայիք, մեղնից հագուստ առնեիք, Պէտք էր աղոտած հանդերձով, առանց սպիտակեղենի, առանց ձեռնոցի, ի հարկէ գլանակը բերանում — ահա այսպէս գնալ: Որ մի կողմից աչքի զարնէր անտարակուսելի գրդեակը, միւս կողմից նոյնպէս անտարակուսելի յարմարութիւնը իւր կամեցածն ստանալու, իւր խօսքին պնդելու, զլուխ գեմ զրած ստիպելու, ոչ թէ տիրուհու կերպով: Ծուլանում եմ, հաւատացէք, ապա թէ ոչ լաւ բան կլինէր այժմ ևս տեսնել Ք. ին նոյն իսկ ձեր այցելութենից յիտոյ, Ի հարկէ շատ փառաւոր դեր գուրս կդար: Առաջարկութիւնը նոյնը թողնել և Ք. ին ներկայանալ: — Այսպէս է, ոյնպէս է, մեր ականջն հասաւ ձեր պանձալի անունը . . . Հետաքրքիր է թէ այս անդամ նա ի՞նչ կանէր:

— Քուք ևս ի՞նչ էք ասում, Ձէ որ նա ընկերութեան գործակալ չէ, նա պարտաւոր չէ ամենքի համար . . . նա ուղղակի կհրամայէր իւր սպասարքին ձեզ սանդուխից վար քշել:

— Շատ կարելի է. միայն թէ խաղին միտքը նա նորանից յիտոյ կհասկանար, հաւատացէք: Յետոյ — . . . ԷՇ, նորա հայրն անիծած — բաւական է: Քուք այժմ ի՞նչ մտադիր էք անելու:

— Ես չկարողացայ իսկ նամակս ձեռքիցն առնել, Այժմ ահա նամակ պրից նորան և ինքումեմ որ խնդիրս անհետեանք թողնէ:

— Ի հարկէ զարձեալ նոյն անոյշ ու բարակ քաղաքավարութեամբ:

— Որքան որ կարողացայ:

— ԷՇ, այդ միենոյն է. ձեր գործն է այդ: Խոկ փողի մասին անհանդիստ մի՛ լինիք. այս գործը մենք նախապէս հոգացինք և յիտոյ ես ուղղակի յանձնարարութեամբ ձեզ մօտ եկայ: Քուք անցեալ օրը շատ տաք տաք ու մեծ մեծ խօսեցիք, բայց հասկացօղն հասկացաւ, մենք ևս անիործ չենք. մեր զիսից ևս այդ բաները շատ են անցել: Հասկացան թէ այստեղ բանն ինչո՞ւմն է, և աշա ես եկել եմ ձեզ մօտ. Նոքա ուղարկեցին, Խընդրեմ, ստացէք: Բայց ինչի՞ այդպէս նայում էք: Ինչի՞ Ի՞նչ եղաւ ձեզ: Ինձ մնում է ուրեմն երգել.

Ինչի՞ երբեմն նայում են այս

Աչքերն այդպէս խիստ իմ վերասաւ:

Բայց հիւանդ աչքերը խիստ չեն նայում, այլ նայում են լի զմայլմունքի, շնորհակալութեան և զրեմէ մանկական ուրախութեան արտայայտութեամբ: Մի՞թէ լուծվեցաւ վերջացաւ այն ինչ որ այնչափ տարակուսանքի, դառն յուզմունքի, բազմօրեայ տանջանքների միակ առարկան էր: Եւ

լուծվեցաւ այնպէս հասարակ, անյունալի և լաւ կերպով։

Օրիորդը շնորհակալութեան խօսքեր է թողմովում։

— Ա Շ Հ, թողէք, այդ աւելորդ է և մանաւանդ ինձ չէ վերաբերվում։ Բայց ահա լսեցէք մի դաս ժեներալների մասին և մտքերդ պահեցէք։

— Ո՞ր ժեներալների մասին։

— Նոյն իսկ այդ գրականական ժեներալների մասին։ 2է որ զանազան ժեներալներ կան, կան և գրականական ժեներալներ։ Թէպէտ Ք., գրականական ժեներալ չէ, բայց բանն այս է որ հիտեռում է նոցա, որչափ զօրութիւն և յարմարութիւն ունի նոցանից օրինակում է։ Դուք որ մատենագրուհի եք, պէտք է հասկանաք և միտք առնեք այս։ Սա մատենագրական նոր տիպար մի է, որ աճումէ մեր մէջ։ Նոքա ապրում են ժեներալական կարգով։ ամսական ապահովեալ թոշակ ունին հազարական րուրլի և այնպէս են կենում։ ինչպէս վայել է ժեներալներին։ Դժուարաւ մարդ են թողնում իւրեանց այդ շրջանին մէջ, և յետոյ խուլ և կոյր են մնում այդ շրջանից դուրս ամեն բանի։ Ապրում ես, նեղվում ես, օգնութեան ես կանչում, մեռնում ես — նոցա ի՞նչ։ Նոքա անհոգ են մնում նաև այն ժամանակ, եթէ մեռնողը լինի նոյն իսկ իւրեանց նախկին մատենագրական դեռ ևս ոչ — ժեներալական շրջանից։ Թերեւս այսքան մահացուցակ մի գրեն թէ։ Այս ի՞նչ ոք ապրեց, զրեց ու մեռաւ հիւանդութենից և աղքատութենից։ եղաւ զնաց, Այլ ի՞նչ պէտքէ։ Համառօտ է, և թէպէտ պարզ չէ, գոնէ և չէ ծանրաբեռնում ժեներալական ուղեղները և չէ խլում նոցա թանկագին ժամանակը, որից կարելի է մեծ շահ ստանալ — տողը 5 և երբեմ 15 կոպէկի զրելով։ Ա Շ, տիրուհի, կեանքն ընթանում է ձեր առջեւ, կենսական դասերն անցնում են, իսկ դուք լալի՛ս եք։ Ոչ ապաքէն չէ կարելի որ ամենքն ևս լան, մեռնեն կամ ժեներալութիւն անեն, պէտք է որ դործ անողներ ևս լինին։ Եւ արժէ՞ր այն ընկերութեան դիմելը։

— Լաւ, ընկերութիւնն այստեղ ի՞նչ յանցանք ունի։

— Ա յն, որ Ք. ի վարմունքը մասամբ իրաւացի էր։ Նա ամենքի համար չէ։ Նորա համար հարկաւոր են յիրաւի երդասենեակներ և զրդեակներ, այսինքն այնպիսի պայմաններ, որոնցից մարդ, եթէ մէկ անդամ ընկաւ, այլ ևս չկարողանայ դուրս գալ ընկերութեան աննշան օգնութեամբ, որ եթէ կանուխ, իւր ժամանակին հասնէր, օգնութիւն կրերէր։ Միւս կողմից, պէտք են ծանօթութիւններ, յարաբերութիւն, պաշտպանողներ, ինչպէս վայել է ժեներալական ընկերութեան։

— Եր խօսքին նայելով, այնչափ վատ է ամեն բան, որ աշխարհում ապրել ևս կարելի չէ։

— Ո՞չ, ինչի՞ համար։ Կարելի է ապրել, թէպէտև մեր կեանքը յիշեցնում է, ինչպէս լաւ արտայայտեց երկելի երգիծաբանը Մալօեարօսլաւեան գինետան սօլեանկան *)։ բայց այնու ամենայնիւ մարդիկ ապրում

(*) Ողեանկան բուն ուստական կերակուր է, որ պատրաստվում է խոզի մաից, երշիկց, կաղամբից, գետնախնձորից, իւղեց, աղից . . . Ուստի երգիծաբանին (կարծեմ

են, և ոչ միայն ապրում են այլ և վերջին պատառն ևս պարզեց յետոյ դեռ չեն յուսահատում: Ինո՞ւ քաղաքու մասն արախ դրա պարզ պարզ Աւրեմն այդ օօլեանկայի մէջ կամ դորանից դուրս այնու ամենայնիւ կայ մի բան:

— Կա թերեւս, միայն թէ . . .

միան հրանցը մենական գույն:

— Ի՞նչ Ա. միան հրանցը մենական գույն գույն:

— Ո. մէջ ին համար չէ: զանց պատճենն անդամայնոց մ մաք մաք զանց պատճենն:

— Ինչի՞ համար: Ա նուանը դո մ ոչ մաս պարզ չէ յաղթեն մաք:

— Այդ հարցը Ք. բնականից շիմաքու մէտ մասն արանքաւուած, մ ոչ:

— Խսկ նորա համար կայ մասն գույն և դամախաւ յարաւ ու այս:

— Ի հարկէ. ապա թէ ոչ նա ինչով պիտի ժեներալութիւն անէր:

— Քայց Ի՞նչ պիտի անէ նա, ով այդ չունի որի համար կեանքն յիրաւի ուրիշ ոչինչ չէ ներկայացնում: բայց միայն սիրտ խառնող ու չընչին սոլեանկայի:

Գեղեցիկ և արտասուքից կարմրած աչքերն այս ժամանակ այնպիսի արտայայտութիւն են ստանում, որից յայտնի երեւումէ, թէ այս վառնդն իւրեանց համար չէ ոչ մի դէպքում:

— Ի՞նչ պէտք է անէ: Այսու նորա բանը վատ է: Նորան օգնել կարելի չէ նոյն իսկ այդ ձեր ընկերութեան նպաստով: Նորան մնում է յետ քաշվել և տեղի տալ հարկաւոր դէպքում: որ ուրիշներն իւր բաժինը վայելեն: Ցանկացողներ ի հարկէ կիրնին այս մասին խորհելն իսկ չարժէ: Որտեղ կայ հաց որ ուսող չունենայ:

(Թարգմ.)

ԲԻՍՈՒԹՈՒՆԻ ԲԵԼԵՌԱԴԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ,

ՈՐՈՇ ՄԻԿ ՄԵԽԸ ՀԱՅԵՐՏ ՊԱՏՄՈՒԹԵԱՆԸ ԿՎԵՐԱԲԵՐԻ:

(Աւրախութեամբ կհրատարակենք մէծ. պ. Գօրջեանի այս հետաքրքիր յօգուածը: Բիսութունեան ժայռը պատմական նշանակութիւն ունի բոլոր եվրոպական հնագէտների և պատմաբանների աչքին և համոզված ենք, որ հայրենասէր հայագէտները չորհակալութեամբ պիտի կարդան պ. Գօրջեանի ներկայ յօգուածը: Հեղինակի լեզուն առանց ուղղելու թողինք խոնարհարար խողբելով հեղինակից միւս անգամ իւր ոճը մեր սովորական զրաւոր լեզուին յարմարեցնել փոքրիշատէ, բաց թողնելով հայութ, ունիւթ, ունիւթ, հայութ, և այլն բառերը:)

Խ. Բ.

Գօգութի այս խօսքն պէտք է հասկանալ իբրեւ ու լաւ եւ վատ ամեն բաների խառնութէ: Վերայիշեալ գինետանը այս կերպակուրը լաւ չէր պատրաստվում: Թ. Ե.